

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԱՀԿ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս,*

*ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտի պետ
էլփոստ՝ hpah@mail.ru*

ԽԱՋԱՏՐՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՀԱԱՀ դասախոս*

էլփոստ՝ khachatryan_goha@mail.ru

ՀՀ անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անհրաժեշտություն էր: Ներկայումս համաշխարհային տնտեսության բնորոշ գծերից են միջազգային առևտրի գլոբալացման գործընթացը, ֆինանսական հոսքերի ակտիվացումը: ՀՀ-ի անդամակցությունը ԱՀԿ-ին արագացրել է համաշխարհային տնտեսությանն ինտեգրման գործընթացները, մեծացրել է ապրանքների արտահանման ծավալները, ՀՀ-ի նկատմամբ չի կիրառվում հակադեմայինգային (հակազնազման) միջոցառումներ, օգտվում է ԱՀԿ-ի շրջանակներում կնքված սակագնային խոչընդոտների սահմանափակման և հայրենական արտադրողների շահերը պաշտպանելու համաձայնագրերից:

Բանալի բառեր՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն, համաշխարհային տնտեսություն, գլոբալացում, ազատ առևտրի ազատականացում, օտարերկրյա ներդրումներ, ֆինանսական հոսքերի ակտիվացում, առևտրի խթանում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տնտեսական ինտեգրում:

ԱՀԿ-ի շրջանակներում կարգավորվում են միջազգային առևտրի գլոբալացման գործընթացը, ֆինանսական հոսքերի ակտիվացումը, ՎԱԿ-երի գործունեության մասշտաբների ընդլայնումը: ԱՀԿ-ին անդամակցելով՝ բարձրանում է ՀՀ-ի՝ որպես զարգացող երկրի դերը: Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին հնարավորություն տվեց Վրաստանի տարածքով տե-



ղափոխվող հայկական ապրանքների վրա Վրաստանի կողմից սահմանված մաքսատուրքերը 50%-ով նվազեցնել: ԱՀԿ-ին անդամակցելը պետական մակարդակով դիտվում է երկրի առկա տնտեսական հիմնախնդիրների լուծման և երկարաժամկետ տնտեսական զարգացման կարևոր գործոն: Ներկայումս, երբ ԱՀԿ-ի անդամների թիվը 164-ն է, նրանցից 161-ը ճանաչված պետություններ են: Դիտարկվել է նաև անդամակցությունը ԱՀԿ-ին տնտեսության զարգացման, արտահանման ծավալների ընդլայնման և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման խորացման տեսանկյունից: Հետազոտվել ու պարզաբանվել է այն տնտեսական մեխանիզմների գործունեությունը, որոնք բխում են ՀՀ-ի անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությունից, շեշտը դնելով մաքսային համակարգի գործունեության վրա:

Հոդվածի համար հիմք են հանդիսացել որոշ հեղինակների աշխատություններ, բայց հիմնականում հեղինակների կողմից կատարված վերլուծություններն են, տեսակետները և եզրահանգումները: Թեմայի շրջանակներում օգտագործված գրականության վերլուծությունը ներկայացված է շատ հակիրճ[1]: Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին երկրի համար դարձել էր օրվա հրամայական: Այն ուներ իր առավելությունները՝ ազատ առևտրի ազատականացում, առևտրի խթանում, տնտեսական ինտեգրում, տեղացի արտադրողների շահերը պաշտպանելու համաձայնագրեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ, օտարերկրյա ներդրումներ, տնտեսական ինտեգրում և այլն:

ՀՀ արտաքին առևտրային կապերի զարգացման հիմնախնդիրները մեծ չափով առնչվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ, որին անդամակցությունը համարվում է էական առաջընթաց ոչ միայն արտաքին առևտրի ազատականացման, այլև ՀՀ տնտեսական բազմաբնույթ կապերի զարգացման առումով: Հոդվածի մեջ ներկայացված նյութերը պարունակում են այդ գործընթացների բազմակողմ գնահատականները, որոնք օգտակար կարող են լինել հասարակության լայն խավերի համար:

Թեման արդիական է այնքանով, որ ներկայումս էլ խիստ անհրաժեշտ է Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին: ՀՀ-ն ԱՀԿ-ին անդամակցել է 2003թ.-ի փետրվարի 5-ին: Անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը նպաստավոր նախադրյալներ է ստեղծել ոչ միայն ՀՀ արտաքին առևտրային կապերի ընդլայնման համար, այլև բարենպաստ

ազդեցություն է ունեցել օտարերկրյա ուղղակի ներդրումների ակտիվացման, հետևաբար և արտաքին առևտրի խթանման վրա:

Արտաքին առևտրի ազատականացումը և օտարերկրյա ներդրումների ներգրավումը փոխկապված տնտեսական հիմնախնդիրներ են, որոնք յուրաքանչյուր երկրի տնտեսական աճի վրա ունեն համակարգային ազդեցություն:

Արդի համաշխարհային տնտեսության բնորոշ գծերից են միջազգային առևտրի գլոբալացման գործընթացը, ֆինանսական հոսքերի ակտիվացումը և վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) գործունեության մասշտաբների ընդլայնումը:

Նշված գործունեության ոլորտները կարգավորվում են ԱՀԿ-ի շրջանակներում: Սա նշանակում է, որ ԱՀԿ-ն ունի մեծ դեր համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացներում, և որքան հնարավոր է, շատ օգուտներ պետք է քաղել:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման հիմքը նոր տեղեկատվական տեխնոլոգիաներն են և կոմունիկացիոն հոսքերը:

Ժամանակակից աշխարհի մյուս հատկանշական բնորոշիչը զարգացող երկրների դերի բարձրացումն է համաշխարհային տնտեսության մեջ: Այսպես, համաշխարհային ՀՆԱ-ի մեջ այդ երկրների բաժինը 1900 թ. կազմել է 26%, իսկ ներկայումս՝ 38%-ից ավելի, զարգացած երկրների բաժինը համապատասխանաբար նվազել է 60%-ից մինչև 51%: Արագ զարգացման օրինակ կարող են ծառայել Չինաստանը, հարավարևելյան Ասիայի երկրները, ինչպես նաև Բրազիլիան և Մեքսիկան:

Դրա հետ մեկտեղ, չնայած զարգացող երկրներում արտադրության և բնակչության բարեկեցության աճին, առավել հարուստ և աղքատ երկրների միջև ճեղքվածքը գնալով մեծանում է:

ՄԱԿ-ի տվյալներով՝ աշխարհի ամենահարուստ երեք անձանց կարողությունը գերազանցում է 48 առավել թույլ զարգացած երկրների ՀՆԱ-ն միասին վերցրած: Երկրագնդի ամենահարուստ 225 անձիք միասին տիրապետում են ավելի քան 1 տրլն. ԱՄՆ դոլար կարողության, իսկ զարգացող երկրների 4,4 մլրդ. բնակչության 3/5-ը գրկված է ջրահեռացումից, 1/3-ը՝ խմելու ջրից, իսկ 1/5-ը՝ բժշկական սպասարկումից: Եվրոպացիների կողմից պաղպաղակի գնման համար տարեկան ծախսը գնահատվում է շուրջ 11 մլրդ. ԱՄՆ դոլար այն դեպքում, երբ ՄԱԿ-ի կողմից 9 մլրդ. ԱՄՆ դոլար



տրամադրելու դեպքում լիարժեք կլուծվեին աշխարհում խմելու ջրի և ջրահեռացման բոլոր կարիքավորների խնդիրները:

ԵՎ վերջապես, համաշխարհային տնտեսության երրորդ կարևոր առանձնահատկությունը Արևմուտքի առաջատար դերի ամրապնդումն է՝ չնայած համաշխարհային մակրոտնտեսական ցուցանիշներում նրա տեսակարար կշռի նվազմանը: Դա առաջին հերթին պայմանավորված է շուկայի, նրա մեխանիզմների և ինստիտուտների խորացված զարգացմամբ, որոնց աստիճանաբար էլ ավելի հստակ սկսում են տիրապետել նաև զարգացող երկրները:

Ինչ վերաբերում է անցումային տնտեսությամբ երկրներին, այդ թվում Հայաստանին, այդ երկրները ոչ համարժեք հաջողությամբ փորձում են ընդգրկվել գլոբալացման ազատական գործընթացում, սակայն դա խիստ ժամանակատար խնդիր է, քանի որ այդ երկրներում շուկայի և ենթակառուցվածքների զարգացման մակրդակը խիստ ցածր է:

Այդ պայմաններում իմաստ ունի հենվել պետական օգնության, այն է՝ «վարչական ռեսուրսի» վրա, սակայն պետք է գիտակցել, որ ներկայիս գլոբալ տնտեսության պայմաններում պետության դերն ակնհայտ փոքր է, քան ՎԱԿ-երի, տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաների, առևտրային և ֆինանսական կենտրոնների դերը:

Հայաստանի տնտեսության ճյուղային կառուցվածքում արտահանման զգալի հնարավորություն ունեցող ճյուղերից է սննդի արդյունաբերությունը:

Անդամակցությունից հետո հարց էր դրվել, թե ինչ դեր կարող էր խաղալ ԱՀԿ-ին անդամակցությունը ՀՀ-ի տնտեսության զարգացման, արտահանման մեծացման և համաշխարհային տնտեսությանն ինտեգրման վրա: Առաջադրված հարցին լիարժեք պատասխան տալու համար, նախ, անհրաժեշտ է բերել կոնկրետ փաստեր, երկրորդ, հստակ պատկերացում ունենալ ԱՀԿ-ի գործունեության կազմակերպման սկզբունքների մասին: Այսպես, օրինակ, Վրաստանի տարածքով տեղափոխվող հայկական ապրանքների վրա Վրաստանի կողմից սահմանված մաքսատուրքերը 50%-ով բարձր էին, քան ադրբեջանական ապրանքների վրա սահմանված մաքսատուրքերը: Դա այն փաստերից մեկն է, որը ցույց է տալիս ԱՀԿ-ին ՀՀ-ի անդամակցության խիստ կարևորությունը, քանի որ Վրաստանը՝ որպես ԱՀԿ-ի անդամ, ըստ ԱՀԿ-ի կանոնադրության՝ այլևս իրավունք չունի դնելու նման տարբերակում: Մեկ այլ փաստ. մինչև ԱՀԿ-ի անդամ լինելը Ռուսաստանը տարեկան մոտավորապես կորցնում էր 1 մլրդ. դոլար, քանի որ տարբեր ձևերով



սահմանափակում էին ռուսական ապրանքների մուտքը համաշխարհային շուկա: Ահա թե ինչու ՌԴ արտաքին առևտրային քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը համարվեց ԱՀԿ-ին անդամակցելը: Իսկ ինչ վերաբերում է ԱՀԿ-ի գործունեության կազմակերպման բազմաթիվ սկզբունքներին, ապա դրանցից ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում երկու գլխավոր սկզբունքներ.

1. ոչ խտրական առևտուր,

2. հրապարակայնություն:

Նշված սկզբունքներից առաջինի հիմնական պահանջն է, որ միջազգային առևտուրը իրականացվի առանց խտրականության, այսինքն՝ ԱՀԿ-ի անդամ բոլոր երկրների համար ապահովվի առևտրի նույն պայմանները: Իսկ երկրորդ սկզբունքի համաձայն՝ ԱՀԿ-ի անդամ բոլոր երկրները պարտավոր են պարբերաբար միմյանց տեղյակ պահել իրենց առևտրային քաղաքականության մեջ կատարվող փոփոխությունների մասին:

Իհարկե, կասկած չկա, որ ԱՀԿ-ի՝ նշված երկու գլխավոր սկզբունքների ճանաչումը հնարավորություն կտա դրանք ծառայեցնել ՀՀ-ի տնտեսական զարգացմանը: Հենց դա է պատճառը, որ ԱՀԿ-ին անդամակցելը պետական մակարդակով դիտվել է (և դիտվում է) մեր հանրապետությունում առկա տնտեսական հիմնախնդիրների լուծման և երկարաժամկետ տնտեսական զարգացման կարևոր գործոն:

Շրջանառվող գնահատականների համաձայն՝ ԱՀԿ-ին անդամակցելն ունեցել է և կունենա դրական բազմաթիվ հետևանքներ: Դրանցից են.

1. Անդամակցությունն արագացրել է համաշխարհային տնտեսությանն ՀՀ-ի ինտեգրման գործընթացները:

2. Մեծացել է ապրանքների արտահանման ծավալները, քանի որ ԱՀԿ-ի անդամ երկրների հետ առևտրում ՀՀ-ն գործում է առավել բարենպաստ ռեժիմի հիման վրա: Վերջինիս պահանջն է, որ ԱՀԿ անդամ յուրաքանչյուր երկիր իր առևտրային գործընկերներին տրամադրի ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան արդեն տրամադրել է թեկուզ մեկ երկրի:

3. ՀՀ-ից զարգացած երկրներ (հատկապես ԱՄՆ և ԵՄ) արտահանվող ապրանքների նկատմամբ չի կիրառվում հակադեմպինգային (հակազնագցման) միջոցառումներ, որովհետև դրանց գների ցածր լինելը հիմնականում պայմանավորված է արտահանվող ապրանքների արտադրության ժամանակ կիրառվող էժան աշխատուժից: Բացի դրանից՝ ԱՀԿ-ի անդամ երկրների ազգային շուկաներ ՀՀ-ից արտահանված ապրանքները

օգտվում են նույն արտոնություններից և զեղչերից, որոնք տարածվում են հայրենական ապրանքների վրա:

4. Օգտվում է ԱՀԿ-ի շրջանակներում կնքված սակագնային խոչընդոտների սահմանափակման և հայրենական արտադրողների շահերը պաշտպանելու համաձայնագրերից:

ԱՀԿ-ին անդամակցության վեջնական արդյունքում ՀՀ-ն իսկապես ձեռք է բերել ապրանքների և ծառայությունների արտահանման, էժան հումքի և կիսաֆաբրիկատների տարողունակ շուկաներ (ԵՄ-ի երկրներ և ԱՄՆ), բարենպաստ պայմաններ է ստեղծել օտարերկրյա ներդրումների մեծացման համար, արագացրել է համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու գործընթացները:

Անդամակցելով ԱՀԿ-ին՝ Հայաստանը ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնք հիմնականում կապված են ապրանքների ներմուծման, մաքսատուրքերի դրույքաչափերի սահմանման և ԱՀԿ շրջանակներում սահմանափակ թվով անդամ-երկրներում գործող որոշ համաձայնագրերերին միանալու հետ: Պարտավորություններից առավել ուշադրության արժանի է նաև այն, որ ՀՀ-ն չի կիրառում որևէ տեսակի հակադեմպինգային գործողություն այնքան ժամանակ, մինչև այդ կապակցությամբ ընդունվի համապատասխան օրենք և տեղյակ պահվի ԱՀԿ-ին: Վեջին ժամանակներս կտրուկ ավելացել է ԱՀԿ անդամների թիվը՝ հասնելով 164-ի, միջազգային առևտրի մոտ 90%-ը կատարվում է ԱՀԿ-ի կանոններով: Տնտեսական գլոբալացման ծավալման պայմաններում հասունացել է ԱՀԿ կատարելագործման անհրաժեշտությունը: Հրատապ խնդիր է դարձել ԱՀԿ-ի վերածումն այնպիսի գլոբալ կառույցի, որը պատշաճ կներկայացնի ոչ միայն զարգացած Արևմուտքի, այլև ողջ միջազգային հանրության, առանձնապես թույլ զարգացած երկրների կենսական շահերը: Սրանից հետևում է, որ գլոբալացման առաջնահերթ ուղղություն կամ դրա իրականացման գերակա ձև պիտի լինի առանձին երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների ծայրահեղ տարբերությունների զգալի հաղթահարումը: Այդ գլոբալ անհամաչափության մեղմումն առավել ևս կարևոր է այն պատճառով, որ մեծապես գերազանցում է նույնիսկ ամենաբևեռացված երկրի ներքին անհամաչափությանը:

Դիտարկենք, թե ինչ ազդեցություն է ունեցել Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին տնտեսության զարգացման, արտահանման ծավալների

ընդլայնման և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման խորացման վրա:

1. ԱՀԿ-ի անդամակցությունը նպաստել է արտահանման ծավալների ուղղակի աճին, քանի որ անդամ երկրների հետ առևտրում հաստատվել է «առավելագույն բարենպաստության ռեժիմ», իսկ այդ երկրների ներսում հայկական ընկերությունների գոծունեություն ծավալելու դեպքում առանձին բացառություններով կիրառվում է «ազգային մոտեցում» և հանգեցրել է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ծավալների էական աճին [6]:

2. Բացի ԱՀԿ-ի՝ հիմք հանդիսացող համաձայնագրերին և մի շարք այլ փաստաթղթերին միանալուց, Հայաստանը ստանձնել է նաև ազատական բնույթի մի շարք կարևոր պարտավորություններ: Մասնավորապես Հայաստանը պարտավորվում է.

- ինչպես արդյունաբերական, այնպես էլ գյուղատնտեսական ապրանքների համար մաքսատուրքերի վերին սահմանը ամրագրել 15%,
- որոշ ապրանքային խմբերի համար ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը սահմանել 0,
- եթե վերը նշվածներին ավելացնենք նաև այն, որ ծառայությունների առևտրում ստանձնած պարտավորությունները, որոնք, բացի հեռահաղորդակցությունից, նույնպես շատ ազատական են, ապա ակնհայտ է, որ Հայաստանը կարող է դառնալ ամենաազատական ռեժիմ ունեցող երկրներից մեկը:

3. Այս կազմակերպության շրջանակներում Հայաստանը կարող է բարձրացնել իր շահերը շոշափող առևտրային հարցերը և դրանք քննարկել ԱՀԿ-ի անդամ ցանկացած երկրի կամ երկրների խմբի հետ:

Ներկա պայմաններում ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը համարժեք է մեր երկրի որդեգրած քաղաքականությանը: Շարունակելով համագործակցությունը ԱՊՀ-ի, ԵՏՄ-ի և տարածաշրջանային այլ երկրների հետ՝ Հայաստանը իր երկրի համար ստեղծում է բարենպաստ առևտրային դիրք և ներքին տնտեսական իրավական դաշտ:

Ակնհայտ է, որ ցանկացած տնտեսական ինտեգրման միավորման հիմքը առևտուրն է: Ուստի նաև պատահական չէ, որ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը կողմնորոշված է համաշխարհային ազատ առևտրի գոտու ստեղծման կողմը, որն ի վիճակի է ապահովել գլոբալ տնտե-



սական ինտեգրացիա: Այս կամ այն տնտեսական խմբավորման արդյունավետությունը, նրա համապատասխանությունը ընդհանուր ընդունված սկզբունքներին կախված է առաջին հերթին արտաքին առևտրի զարգացածության մակարդակից:

ԱՀԿ-ի հիմնադրման հիմնարար փաստաթուղթը «ԱՀԿ-ի ստեղծման Մարակեշյան համաձայնագիր»-ն է, որի բաղկացուցիչ մասն են համարվում ապրանքների և ծառայությունների առևտուրը, առևտրին առնչվող մասնավոր սեփականության իրավունքները կարգավորող 22 համաձայնագրերն ու այլ փաստաթղթերը, ինչպես նաև անդամ երկրների նախարարների հայտարարություններն ու որոշումները վերոհիշյալ հարցերի վերաբերյալ: Այդ համաձայնագրերի մեջ են մտնում՝ «Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր»-ը, «Մասնավոր սեփականության իրավունքի առևտրային սպեկտրներին առնչվող համաձայնագիր»-ը[5]:

Մեր հիմնական նպատակն է հետազոտել և պարզաբանել այն տնտեսական մեխանիզմների գործունեությունը, որոնք բխում են Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցությունից՝ շեշտը դնելով մաքսային համակարգի գործունեության վրա:

Եթե բնութագրելու լինենք ԱՀԿ-ի առաքելությունը գլոբալիզացիայի զարգացման պայմաններում, ապա կարելի է բնորոշել, որ ԱՀԿ համակարգը հանդիսանում է մի օրենսդրական փաթեթ, որը սահմանում է ապրանքների և ծառայությունների փոխանակության կանոնները: Դա նշանակում է, որ ԱՀԿ-ին անդամակցության առաջնային արդյունավետությունը արտացոլվել է մաքսային համակարգի մեջ, որը յուրաքանչյուր երկրի օրենսդրական կապն է արտաքին աշխարհի հետ: Մաքսային համակարգի ձևավորման և բարելավման գործում մեծ նշանակություն է ունեցել հենց ԱՀԿ-ն: Վերջինիս շնորհիվ Հայաստանում տեղի ունեցան բազում օրենսդրական և կանոնակարգային բարեփոխումներ, որոնք իրենց վերջնական արտահայտությունն են գտել 2001թ.-ի հունվարին ուժի մեջ մտած ՀՀ մաքսային օրենսգրքի մեջ (մինչ այդ գործում էին իրարից զատ մաքսային տարբեր փաստաթղթեր)[7]: Այսօր Հայաստանի առջև ծառացած են բազում երկկողմանի խնդիրներ, որոնք կապված են և՛ ազատական շուկայական հարաբերությունների հաստատման, և՛ ազատական առևտրի զարգացման հետ: Միջազգային հանրությունը իր արտաքին առևտրային հարաբերությունները կարգավորում է իրարամերժ գործիքներով. Մի կողմից խրախուսվում է արտաքին առևտրային սահմանափակումների նվազեցումը, մյուս կողմից՝ մեծանում է



առևտրային հարաբերությունների կարգավորման թաքնված գործիքների կիրառությունը: Երկրները, այդ թվում նաև Հայաստանը, ունեն արտաքին առևտրի կարգավորման այլընտրանքային շատ գործիքներ, և դրանց կիրառությունը ուղղակիորեն պետք է կապված լինի այս կամ այն նպատակային քաղաքականության հետ: Այդ քաղաքականությունը, ըստ սահմանման, ձևավորվում է երկրի՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման, տնտեսական զարգացման, արտահանաման դիվերսիֆիկացիայի և այլ գործոններից ելնելով: Հայաստանը համաշխարհային տնտեսության մեջ ունի փոքր տեսակարար կշիռ, որը պայմանավորված է և՛ արտահանվող ապրանքների արտահանության սակավությամբ, և՛ արտահանվող ապրանքների անմրցունակությամբ: Եվ այստեղ վերլուծությունը պետք է կատարվի այն ուղղությամբ, թե ՀՀ արտաքին առևտրի ազատականացումը և դրան համապատասխան մաքսային համակարգի փոփոխությունը ինչպես են ազդում ՀՀ արտաքին առևտրային կապերի վրա:

ՀՀ-ն, անկախության տարիներից սկսած, որդեգրել է առևտրային հարաբերությունների ձևավորման ազատականացված ուղին, որը միջազգային պրակտիկայում դրսևորվում է օրենքների և իրավական նորմերի փաթեթների, երկկողմ, բազմակողմ միջպետական և միջկառավարական համաձայնագրերի միջոցով: Ինչպես նշվեց, վերջիններս առաջնային ազդեցություն են ունենում մաքսային համակարգի ձևավորման և զարգացման վրա: Այսօր համարվում է, որ ՀՀ մաքսային համակարգը գործում է միջազգայնորեն ընդունված նորմերին և չափանիշներին ներդաշնակեցված: Արտահանվող ապրանքների նկատմամբ ընդհանրապես հարկեր չեն սահմանվում, իսկ ներմուծվողները հարկվում են 0%-ից 10% մաքսերով (սակայն աշխարհում ներմուծման մաքսերի միջին մակարդակը կազմում է 3-5% և ունի նվազման միտում): Գործում է ներմուծվող և արտահանվող ապրանքների լիցենզավորման համակարգը, որն ուղղված է սպառողների պաշտպանությանը[8]:

Որոշ տնտեսագետներ գտնում են, որ բոլոր լայն սպառման ապրանքների նկատմամբ կիրառվող 10% մաքսատուրքերը պետք է հավասարեցվեն 0%-ի, սակայն այդ կարծիքին համամիտ չենք, քանի որ պետք է իջեցվեն այն ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերը, որոնց ներմուծումն անփոխարինելի է (կոտլեկցվի գների իջեցմամբ) և բարձրացնել այն ապրանքներինը, որոնց արտադրությունը հնարավոր է կազմակերպել Հայաստանում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Международные экономические отношения //под ред. А. Ю. Архипова, Ростов Н/Д, Феникс, 2009, 571с [стр. 42].
2. Волгина Н. А., Международные экономика, М., Эксмо, 2010, 480 стр. [стр. 76-77].
3. Мировая экономика и международные экономические отношения //под ред. А. С. Булатова, М., 2012. [стр 52].
4. Թադևոսյան Զ. Ա., Գալոյան Դ. Ռ. Միջազգային Տնտեսագիտություն, Տեսություն և Քաղաքականություն: Ուսումնական ձեռնարկ: Երևան: 2015: 448 էջ, [էջ174-179]
5. www.wto.org Առևտրի համաշխարհային կազմակերպություն պաշտոնական կայք:
6. <http://www.armstat.am>
7. <https://www.e-draft.am>, <https://www.arlis.am>
8. <https://www.petekamutner.am>

RA FOREIGN TRADE REGULATION WITHIN THE FRAMEWORK OF WTO MEMBERSHIP

HARUTYUNYAN HARUTYUN

*PhD in Economics, Associate Professor
GSU Lecturer, ANAU
e-mail: hpah@mail.ru*

KHACHATRYAN GOHARIK

*PhD in Economics, Associate Professor
ANAU Lecturer
e-mail: khachatryan_goha@mail.ru*

Armenia's accession to the World Trade Organization was a necessity. Currently, the main features of the world economy are the process of global trade and the intensification of financial flows. The WTO membership has accelerated the processes of integration to the world economy, increased export volumes. No anti-dumping measures are applied to Armenia within by tariff barriers concluded within the framework of the domestic tariffs.

Key words: *World Trade Organization, World Economy, Globalization, Free Trade Liberalization, Foreign Investment, Financial Flow Activation, Trade Promotion, Information Technology, Economic Integration.*



РЕГЛАМЕНТ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ РА В РАМКАХ ЧЛЕНСТВА В ВТО

АРУТЮНЯН АРУТЮН

Кандидат экономических наук, доцент

Преподаватель ГГУ, НАУА

электронная почта: hrah@mail.ru

ХАЧАТРЯН ГОАРИК

Кандидат экономических наук, доцент

Преподаватель НАУА

электронная почта: khachatryan_goha@mail.ru

Вступление Армении во Всемирную торговую организацию было необходимо. В настоящее время основными чертами мировой экономики являются процесс интернационализации мировой торговли, интенсификация финансовых потоков. Членство Армении в ВТО ускорило процесс интеграции в мировую экономику, увеличило объемы экспорта товаров, в отношении Армении не применяются антидемпинговые меры, пользуется заключенными в рамках ВТО соглашениями об ограничении тарифных барьеров и защите интересов отечественных производителей.

Ключевые слова: *Всемирная торговая организация, Мировая экономика, Глобализация, Либерализация свободной торговли, Иностраннные инвестиции, Активизация финансовых потоков, Содействие торговле, Информационные технологии, Экономическая интеграция.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 08.10.2021թ.: